ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Հ. ՑԻՐՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ցիրունյան.

Ի պատասխան Ձեր 14.05.2019թ. հ.01/244 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի ներհամայնքային միկրոավտոբուսային հ.23 երթուղուց բացի Հաղթանակ թաղամասը նախկինում սպասարկող ավտոբուսային հ.56 երթուղու աշխատանքը դադարեցվել է՝ երթուղին շահագործող կազմակերպության կողմից դրա սպասարկումից հրաժարվելու պատճառով, որի արդյունքում որոշակիորեն վատթարացել է թաղամասի բնակիչների տրանսպորտային սպասարկման վիճակը:

Հաղթանակ թաղամասի բնակիչների սպասարկումը բարելավելու նպատակով, փորձնական կարգով, միկրոավտոբուսային հ.34 երթուղու ուղեգիծը երկարացվել էր մինչև Հաղթանակ թաղամաս, հաշվի առնելով այն հանգամանքը, որ երթուղին հիմնականում կրկնում է ավտոբուսային հ.56 երթուղուն՝ ՀԱԹ-ով, Լենինգրադյան, Կիևյան փողոցներով, Կոմիտասի պողոտայով մինչև Զեյթուն թաղամաս («Ալմաստ» գործարանի մոտ), սակայն մոտ մեկ շաբաթ աշխատելուց հետո երթուղին սպասարկող ընկերությունը, երթուղու շահագործման ցածր արդյունավետության պատճառով, հրաժարվել է մտնել Հաղթանակ թաղամաս:

Ելնելով Հաղթանակ թաղամասի բնակիչների տրանսպորտային սպասարկման վիճակի բարելավման անհրաժեշտությունից, թաղամասը սպասարկող միկրոավտոբուսային հ.23 երթուղու ուղեգիծը երկարացվել է մինչև Կաթի կոմբինատ (ավտոբուսային հ.56 երթուղու վերջնականգառ): Հանձնարարվել է միկրոավտոբուսային հ.23 երթուղին սպասարկող ընկերությանը՝ հնարավորինս ավելացնելու գիծ դուրս բերվող շարժակազմի քանակը (ներկայումս երթուղու սպասարկումն իրականացվում է միջինը 15-16 միավոր շարժակազմով) և կանոնավորել երթուղու աշխատանքը, մասնավորապես՝ երեկոյան ժամերին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ միկրոավտոբուսային հ.23 երթուղու աշխատանքը վերցված է հսկողության տակ, իսկ առաջին իսկ հնարավորության դեպքում կքննարկվի Հաղթանակ թաղամասում ևս մեկ երթուղու շահագործման հարցը, այդ թվում՝ որևէ նոր կազմակերպության կողմից ցանկություն հայտնելու դեպքում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ